Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ԱՌ 01.01.2016Թ ՄԻՆՉԵՎ 01.01.2017Թ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Հարգելի համագյուղացիներ հաշվետու ժամանակահատվածում մեր կողմից հաջողվել է իրականացնել հետևյալ աշխատանքները:

ֆինանսական մաս

Եկամուտներ(մուտքային մաս)

հ/հ	Հավաքագրված հարկի անվանումը	Պլանը տարեկան	Փաստացի կատարում	%
1	Գույքահարկ շենք շինություն	1600.0	2103.6	132.0
2	Գույքահարկ փոխադրամիջոցներ	4100.0	5628.9	137.3
3	Հողի հարկ	6200.0	6219.4	100.3
4	Վարձակալական հողի վարձ	350.0	-	0
5	Այլ ոչ հարկային եկամուտներ	780.0	891.4	114.0
6	Տեղական տուրքեր	150.0	191.0	127.3
7	Դոտացիա	28736.5	28736.5	100
8	Այլ ընթացիկ դոտացիա	270.1	270.1	100
9	Ինքնակա. Կառույց. Շին. Օգտ. վճարներ		446.4	-
10	Տեղական վճարներ		56.2	-
11	Հողի օտարումից մուտքեր		1245.5	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	42361.6	45789.0	108.0

6	Ընդ. բնույթի այլ ծառայություն	400.0	347.3	86.8
7	Մասնագիտական ծառայություն	500.0	452.2	90.4
7	Շենք. և կառ. ընթացիկ նորոգում	500,0	217.9	43.5
8	Մեքեն. և սարք. ընթացիկ նորոգում	150.0	100.0	66.6
9	Գրասենյակային նյութեր	200.0	95.3	47.6
10	Տրանսպորտային նյութեր	900.0	900.0	100
11	Հատուկ նպատակային այլ նյութեր	300.0	251.7	83.9
11	Վարչական սարքավորումներ	1667.0	1469.0	88.1
12	Նախագծահետազոտական ծախսեր	400.0	-	-
13	Նյութեր և պարագաներ	4400.0	4567.2	103.8
14	Երիտասարդական ծրագիր	400.0	310.0	77.5
15	Սուբսիդիա	12670.0	11976.5	94.5
16	Սոց օգնություն	3821.5	3821.5	100
17	Աղբահանում	870,0	870.0	100
	ԸՆԴԱՄԵՆԸ	48428.6	45371.5	94

Պտղոնաբ նանամբի ղեկավար՝ Կ.Արթենյան

մանկապարտեզի տնօրենը որ աշխատակցություն, [illegible]
անդամներ,համայնքի բնակիչներ: Ներկա էր նաև Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ մարզպետի տեղակալ Լարիսա Մուրադյանը:

Ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Կարապետ Արթենյանը:Նա ողջունեց ներկաներին և ներկայացրեց 2016 թվականի ընթացքում կատարված աշխատանքները: Համայնքի ղեկավարը նշեց, որ 2016 թվականի ընթացքում համայնքում կատարվել են նշանակալից աշխատանքներ:

Ամբողջությամբ վերանորոգվել է համայնքի այգին ,բետոնապատվել են այգու ներսի ճանապարհները,իսկ գլխավոր ճանապարհը,որը տանում է դեպի արցախյան և հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանը , ամբողջությամբ վերանորոգվել է բազալտե սալիկներով: վերանորոգվել է նաև հուշարձանի հարակից տարածքը,որտեղ նույնպես տեղադրվել են բազալտե սալիկներ: Բետոնապատվել են նաև այգու այն հատվածները,որտեղ տեղադրված են սեղաններ և նստարաններ: Համայնքի այգու պարսպի՝ դեպի մանկապարտեզ տանող հատվածի ներքևի մասում տեղադրվել են ճամփեզրի քարեր:

Համայնքի գերեզմանատան մոտ կառուցվել է ցայտաղբյուր, որի կողքին կառուցվել է հանգստյան տաղավար: Տարածքը բարեկարգվել է ,ցայտաղբյուրի դիմացը խճապատվել է ,հանգստյան տաղավարը ներկվել է, հատակը բետոնապատվել:

Մայիսի 24-ին Պտղունք համայնքում ,Պատանեկան Նվաճումներե կազմակերպության, ՎիվաՍել ՄՏՍ-ի աջակցությամբ և Պտղունքի համայնքապետարանի ֆինանսավորմամբ համայնքի Մուսալեռ փողոցում կառուցվել է մանկական խաղահրապարակ,տեղադրվել են խաղային ատրակցիոններ,տարածքը ցանկապատվել է,խճապատվել է,տեղադրվել է նստարան:

2016թվականի ընթացքում ամբողջությամբ հարթվել և խճապատվել է Հայկի փողոցը,և համայնքի նորակառույց թաղամասերից դեպի Արաբոյի փողոց տանող ճանապահը,և դեպի Յեսայի Յաղուբյան փողոց

տանող ճանապարհները հարթեցվել են ,իսկ դեպի Յեսայի Ցաղուբյան փողոց տանող ճանապարհը նաև խճապատվել է:

2016թվականի ընթացքում կենցաղային և շինարարական աղբից մաքրվել են համայնքի Կորյունի փողոցը, համայնքի այգու և մանկապարտեզին հարակից տարածքները:

Ոռոգման սեզոնին ընդառաջ՝ ,Վաղարշապատ ՀՕԸ-ի հետ համատեղ մաքրվել է համայնքի ոռոգման ներքին ցանցը,կատարվել են բետոնապատման աշխատանքներ:

Ամբողջովին փոխվել է համայնքապետարանի շենքի մուտքի ծածկը,որից հետո ներվել է,տեղադրվել են ծաղկամաններ,և ամրացվել է ՀՀ դրոշը:

Պտղունքի երիտասարդական խորհրդի հետ համատեղ 2016 թվականի ընթացքում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, որոնցից առավել նշանակալից են մարտ ամսին կազմակերպված ֆուտբոլի մրցաշարը, ,Պտղունքի ամենախելացինե մրցույթը,համայնքի նորակոչիկներին բանակ ճանապարհելու միջոցառումը,ինչպես նաև տարբեր թեմատիկ և ուսուցողական էքսկուրսիաներ:

Համայնքի մանկապարտեզում անցկացվել են տարբեր միջոցառումներ՝ նվիրված Մայրության Գեղեցկության տոնին, Սուրբ Զատիկին,Ապրիլյան պատերազմին, Հունիսի 1-ին ,ավարտող երեխաների դպրոց գնալուն:Միջոցառումներին հրավիրվել են տարբեր մուլտ հերոսներ,ծաղրածուներ: Երեխաների ավարտական հանդեսին դպրոցական պայուսակներ ստացան երեխաները՝ համայնքապետարանի կողմից:

2016 թվականի ընթացքում անցկացվել է գիշերային լուսավորություն համայնքի Տերյան փողոցի մոտ 200 մետր երկարությամբ ,Ագաթանգեղոսի փողոցից դեպի Հայկի փողոցը տանող ճանապարհը,այնուհետև Հայկի փողոցով շարունակվել է մոտ 150 մետր:

2016 թվականի ընթացքում մի քանի անգամ կատարվել են համայնքի լուսավորության համակարգի ընթացիկ վերանորոգումներ:

Տարեվերջին խճապատվել է Անիի փողոցը,Թամանյան և Սփյուռքի փողոցների սկզբնամասերը: 2016 թվականը համայնքի գյուղատնտեսությամբ զբաղվողների համար բավականին դժվար տարի էր,քանի որ գարնանը տեղի ունեցած ցրտահարությանը հաջորդեց ամռանը տեղի ունեցած կարկտահարությունը,համայնքում ստեղծվեց հանձնաժողով,որն ուսումնասիրեց և գնահատեց վնասի չափը,որը ներկայացվեց համապատասխան մարմիններին:

փաթեթներ:

Հաշվետու ժամանակահատվածում կայացել է Պտղունք համայնքի ավագանու 16 նիստ: Համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին տրվել է 3821500 (երեք միլիոն ութ հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր) դրամ սոցիալական օգնություն: Կատարվել է շուրջ 410 քաղաքացիների ընդունելություն:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ,բարձրացրեցին իրենց հուզող հարցերը: Առաջնահերթ նշվեց նոր դպրոցի կառուցման հարցը,որը չնայած գործադրվող բոլոր ջանքերին.այնուամենայնիվ չի լուծվում,իսկ գործող դպրոցում նորմալ ուսումնական պրոցես կազմակերպելը գրեթե անհնարին է:Ելույթ ունեցողները մարզպետի տեղակալին խնդրեցին ևս մեկ անգամ այս հարցը բարձրացնել մարզպետարանում և ամեն կերպ աջակցել հարցի լուծմանը:

Նշվեց համայնքի միակ բազմաբնակարան շենքի տանիքի խնդիրը,որը շտապ վերանորոգման կարիք ունի,իսկ համայնքը չունի բավարար միջոցներ՝ նշված աշխատանքները կատարելու համար:

Ամեն տարի համայնքի բյուջեի հաշվին համայնքում կատարվում են մոտ 10 միլիոն դրամի աշխատանքներ:Այդ աշխատանքները կլինեն ավելի արդյունավետ և նպատակային,եթե համայնքին հատկացվող ֆինանսական համահարթեցման գումարը ավելանա ,քանի որ եղած միջոցներից մոտ 16միլիոն դրամ ծախսվում է մանկապարտեզի գործունեության համար , որը ամբողջությամբ ֆինանսավորվում է համայնքի բյուջեից:

Համայնքի բնակիչներ կողմից նշվեց ,որ համայնքում չկան մշակույթի տուն,սպորտային դահլիճ,որի պատճառով համայնքի երիտասարդները զրկված են իրենց ազատ ժամանակը ավելի արդյունավետ անցկացնելու հնարավորությունից:

Ամփոփիչ խոսքում համայնքի ղեկավարը շնորհակալություն հայտնեց Արմավիրի մարզպետարանին՝ հարկ եղած դեպքում Պտղունք համայնքին աջակցելու համար:

Ավարտական խոսքում Լ.Մուրադյանը համայնքում կատարված աշխատանքը գնահատեց բավարար,ինչպես նաև խոստացավ բարձրացված հարցերը ներկայացնել մարզպետարան՝ նշված խնդիրներին լուծում տալու նպատակով:

Պտղունք համայնքի ղեկավար՝ Կ.Արթենյան

Աշխատանքային քարտուղար՝ Ա.Ավագյան